ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/7500/02/21
2024թ.

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«11» սեպտեմբերի 2024 թվական ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

քննելով ըստ «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հայցի (այսուհետ նաև՝ Ընկերություն) ընդդեմ Աննա Համբարձումյանի, երրորդ անձինք Կարինե Մարկոսյանի, Աշոտ, Լիանա և Մերի Համբարձումյանների՝ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործի ենթակայության հարցը,

ՊԱՐԶԵՑ

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 76-րդ շենքի թիվ 49 հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել Աննա Համբարձումյանի բաժինը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառել և բռնագանձումը տարածել պարտապանին հասանելիք գումարի վրա:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 12.07.2021 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Արզումանյանը 05.06.2024 թվականին որոշում է կայացրել «Գործը Հայաստանի

Հանրապետության սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին», որով սույն գործն ըստ ընդդատության հանձնվել է Սնանկության դատարանին:

Սնանկության դատարանի դատավոր Լ. Հարությունյանը 04.09.2024 թվականին կայացրել է «Քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու համար այն ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին» որոշում:

Թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 09.09.2024 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում, յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից

եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Իր հերթին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ դատարան): Սնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): Սույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն նախատեսված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի՝ վերը վկայակոչված իրավակարգավորումներից հետևում է, որ սնանկության գործերի վարումն իրականացնում է Սնանկության դատարանը՝ միաժամանակ իրականացնելով նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա

ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

Ընդ որում, Սնանկության դատարանը, ընդհանուր իրավասության դատարանից ստանալով քաղաքացիական գործը, յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է (...) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար, (...):

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ նույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով:

Վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով պատասխանողների՝ սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, առաջին հերթին պետք է քննարկման առարկա դարձնեն այդ գործերի նկատմամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կիրառման հնարավորության հարցը:

Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը կիրառելի է այնպիսի գործերի նկատմամբ, որոնցով հայցվորի կողմից պատասխանողին ուղղված է գումարի բռնագանձման պահանջ կամ գույք հանձնելու պահանջ: Նշվածից հետևում է, որ վկայակոչված իրավադրույթը կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) քաղաքացիական գործով պատասխանողը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ է ճանաչվել,

բ) քաղաքացիական գործով սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ներկայացված է գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ վերլուծելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ նշված հոդվածում սահմանված է սնանկության գործընթացի հիմնական

առանձնահատկություններից մեկը, որը դրսևորվում է նրանում, որ պարտապանի և պարտատերերի շահերից ելնելով՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից օրենքով նախատեսված պահանջներով քաղաքացիական գործերի վարույթները պետք է կենտրոնանան մեկ վարույթում, այն է՝ սնանկության վարույթում: Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոփոխության *(տե՛ս Մարինե Ավետիսյանն ընդդեմ Արտեմ Ավետիսյանի թիվ ԵՄԴ/1140/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ սնանկության գործով պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու միջոցով հայցապահանջի բուն նպատակը պարտապանի նկատմամբ իր ունեցած պահանջի բավարարում ստանալն է, որպիսի պահանջի իրականացումն առանց գումար կամ այլ գույք հանձնելու եղանակի, որևէ այլ կերպ չի կարող իրականացվել, քանի որ եթե ներկայացված պահանջի քննության ընթացքում պարզվի, որ հնարավոր չէ պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնել, ապա պետք է իրականացվի հրապարակային սակարկություններով գույքի վաճառք, իսկ սնանկ ճանաչված պարտապանի գույքի վաճառքը սնանկության վարույթից դուրս իրականացնելը հանգեցնելու է պարտապանից գույք վերցնելուն, իսկ եթե ներկայացված հայցի քննության ընթացքում հնարավոր լինի գույքը բնեղենով առանձնացնել, ապա բաժնային սեփականության մասնակիցներին պետք է առաջարկ արվի գնելու պարտապանի բաժինը ներկայացված հայցապահանջի շրջանակներում հարուցված քաղաքացիական գործի շրջանակներում, որը նույնպես հանգեցնելու է սնանկության վարույթի շրջանակներից դուրս պարտապանի գույքի հանձնման: Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության վարույթի առկայության պայմաններում պարտատերը կարող է պարտապանի դեմ պահանջները ներկայացնել սնանկության վարույթի շրջանակներում, որոնց բավարարմանն ուղղված գործառույթները (պարտապանի գույքի գույքագրում, բաժանում, օտարում և այլն) վերապահված են սնանկության կառավարչին *(տե՛ս «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Հակոբ Սաֆարյանի և Ելենա Հարությունյանի թիվ ԵԴ/1846/02/20 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2024 թվականի որոշումը)*:

Սույն քաղաքացիական գործով դիմելով դատարան՝ Ընկերությունը, ղեկավարվելով նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածով, հայցադիմում է ներկայացրել դատարան՝ պահանջելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 76 շենքի 49-րդ հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել Աննա Համբարձումյանի բաժինը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընդհանուր գույքը հրապարակային

սակարկություններով վաճառել և բռնագանձումը տարածել պարտապանին հասանելիք գումարի վրա:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 12.07.2021 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Թիվ ՍԸԴ/0702/04/23 սնանկության գործով Սնանկության դատարանի 06.04.2023 թվականի վճռով սույն քաղաքացիական գործով պատասխանող Աննա Համբարձումյանը ճանաչվել է սնանկ:

Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Կոտայքի մարզի Կենտրոն թաղամասի 76-րդ շենքի թիվ 49 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով գրանցված է Աննա Համբարձումյանի, Կարինե Մարկոսյանի, Աշոտ, Լիանա և Մերի Համբարձումյանների անվամբ:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Արզումանյանը 05.06.2024 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին, պատճառաբանելով, որ՝

«Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Աշոտ Համբարձումյանի կողմից 27.05.2024 թվականին դատարան մուտքագրված միջնորդությանը կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ սնանկության դատարանի 06.04.2023 թվականի թիվ ՍԸԴ/0702/04/23 վճռով Ռուբիկ Հրանտի Աղաջանյանի դիմումն ընդդեմ Աննա Աշոտի Համբարձումյանի՝ Աննա Աշոտի Համբարձումյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է: Աննա Աշոտի Համբարձումյանը ճանաչվել է սնանկ, և արգելանք է դրվել Աննա Աշոտի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել:

Աննա Աշոտի Համբարձումյանի վերաբերյալ վերը նշված սնանկության գործը, համաձայն «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունների, սույն որոշման կայացման պահի դրությամբ գտնվում է քննության փուլում (...):

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործը սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճով քաղաքացիական գործ է, որը ենթակա է քննության ՀՀ սնանկության դատարանում»:

Սնանկության դատարանի դատավոր Լ. Հարությունյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, 04.09.2024 թվականին որոշում է կայացրել թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, այն պատճառաբանությամբ, որ՝

«ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը «Քաղաքացիական գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին» 05.06.2024 թվականի որոշմամբ, փաստելով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Աշոտ Համբարձումյանի միջնորդության և դրան կից

փաստաթղթերի առկայությունը, հանգել է այն հետևության, որ սույն քաղաքացիական գործը սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճով քաղաքացիական գործ է, որը ենթակա է քննության ՀՀ սնանկության դատարանում: Ընդ որում՝ վերը նշված որոշման եզրափակիչ մասում ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի անդրադարձել գործի վարույթը կարճելու միջնորդությունը բավարարելու կամ մերժելու հարցին (հատոր 9-րդ, գ.թ. 42-45):

Դատարանը փաստում է, որ ՀՀ սնանկության դատարանի 06.04.2023 թվականի օրինական ուժի մեջ մտած թիվ ՍՆԴ/0702/04/23 վճռով Ռուբիկ Հրանտի Աղաջանյանի դիմումն ընդդեմ Աննա Աշոտի Համբարձումյանի՝ Աննա Աշոտի Համբարձումյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է, և Աննա Աշոտի Համբարձումյանը ճանաչվել է սնանկ (հիմք՝ «ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգ):

Վերը նշված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվոր «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից սնանկ ճանաչված պատասխանող Աննա Աշոտի Համբարձումյանի դեմ ըստ էության ներկայացվել է գույքի հանձնման, իսկ անհնարինության դեպքում գույքի վաճառքից ստացված գումարի բռնագանձման պահանջ, որպիսի պայմաններում ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը պետք է նախ քննարկման առարկա դարձներ թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործով վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու հնարավորության հարցը, հետո միայն քննարկեր նույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման շրջանակներում նշված գործը Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան փոխանցելու հարցը:

Մինչդեռ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն ըստ էության քննարկել է միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման շրջանակներում թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործը Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան փոխանցելու հարցը, չանդրադառնալով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Աշոտ Համբարձումյանի՝ թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին, միջնորդությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի 08.06.2020 թվականի թիվ ԵԴ/9928/02/20, 27.07.2021 թվականի թիվ ԵԴ/4022/02/21, ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2024 թվականի թիվ ԿԴ/1349/02/19 քաղաքացիական գործերի ենթակայությունը որոշելու մասին որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, համաձայն որոնց առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով պատասխանողների սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, առաջին հերթին պետք է քննարկման առարկա դարձնեն այդ գործերով վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված

հիմքով կարճելու հնարավորության հարցը, Դատարանը գտնում է, որ թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործը Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում քննության ենթակա չէ, քանի դեռ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից չի քննարկվել վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Աշոտ Համբարձումյանի միջնորդությունը՝ թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին, և նշված քաղաքացիական գործի վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու հնարավորության հարցը»:

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը համակարգային վերլուծության ենթարկելով նույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, արձանագրում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից կարճման են ենթակա բացառապես քաղաքացիական կամ վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող այն գործերի վարույթները, որոնցով ներկայացված է սնանկ ճանաչված պարտապանից գումար բռնագանձելու կամ գույք հանձնելու պահանջ՝ պայմանով, որ այդ պահանջը պարտատերերը հնարավորություն ունեն սնանկության վարույթի շրջանակներում ներկայացնելու որպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի իմաստով առանձին պահանջ, իսկ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված պահանջները չեն հանդիսանում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի առարկա, սակայն ծագել են սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ, ու այդ վեճը կարող է ազդել սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, ապա այդ գործերի վարույթները ենթակա են ոչ թե կարճման, այլ այդ գործերը ենթակա են ըստ առարկայական ընդդատության հանձնման Սնանկության դատարանի քննությանը՝ նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ քննելու համար:

Նման պայմաններում պետք է արձանագրել, որ սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում՝ պատասխանող Աննա Համբարձումյանի դեմ ներկայացված հայցապահանջն իր բնույթով համապատասխանում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին, քանի որ պարտատեր «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան սույն գործով ներկայացված հայցապահանջով ըստ էության նպատակ է հետապնդել պարտապան Աննա Համբարձումյանին և երրորդ անձանց համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու ու դրա վրա բռնագանձում տարածելու եղանակով ստանալ իր պահանջի բավարարում:

Հետևաբար, Սնանկության դատարանի 06.04.2023 թվականի վճռով Աննա Համբարձումյանի սնանկ ճանաչված լինելու պարագայում Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վերը նշված հանգամանքների առկայության

պայմաններում պետք է առաջնորդվեր ոչ թե «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, այլ՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով նշված նորմերով սահմանված իրավակարգավորումները՝ որոշում կայացներ սույն քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործն ըստ «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հայցի ընդդեմ Աննա Համբարձումյանի, երրորդ անձինք Կարինե Մարկոսյանի, Աշոտ, Լիանա և Մերի Համբարձումյանների՝ համատեղ սեփականություն հանդիսացող գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու, դրա անհնարինության դեպքում՝ ամբողջ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջների մասին, ենթակա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑ

Թիվ ԿԴ/7500/02/21 քաղաքացիական գործն ըստ «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հայցի ընդդեմ Աննա Համբարձումյանի, երրորդ անձինք Կարինե Մարկոսյանի, Աշոտ, Լիանա և Մերի Համբարձումյանների՝ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, ենթակա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ